

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆՍԵՆՍՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության սեկտորը վերջերս հրատարակեց արժեքավոր ուսումնասիրություններ՝ նվիրված անցյալի հայ մտքի պատմության տարբեր էջերին: Գրանցից մեկն է Լրիտասարգ մասնագետ Գ. Հ. Գրիգորյանի մենագրությունը, ուր բննարկված են Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի հասարակական-քաղաքական, բարոյագիտական հայացքները և նրանց մշակած համապատասխան ծրագրերի իրականացման ուղիները:

Ճիշտ է, նշված գործիչների մասին մինչև օրս բավականաչափ դրվել է, սակայն գրախոսվող աշխատությունը, իր բնույթով, հարցերի դրվածքով և նյութն ամբողջացնելու փորձով, բոլորովին նոր ու ինքնատիպ գործ է:

Նախքան բուն խնդրին անցնելը, հեղինակը՝ հատուկ զխուստ խոսում է պատմա-քաղաքական այն իրադրությունների մասին, որոնք հիմք են հանդիսացել Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի և նրանց համախոհների երևան գալու: Նա այստեղ ցույց է տալիս, որ XVIII դարի երկրորդ կեսի հայ առաջավոր հասարակական-քաղաքական միտքը արդյունք էր յուրահատուկ պայմանների: Այն ծնվել էր մի կողմից Հայաստանի և Անդրկովկասի քաղաքական իրադրությունների թելադրանքով, իսկ մյուս կողմից՝ հնդկահայ բուրժուազիայի սոցիալ-տնտեսական պայմանների հիման վրա: Որպես այդպիսին, այն, ամբողջ էությունով, կապված էր մայր հայրենիքի և հայ ժողովրդի հետ, գլխավոր նպատակ ունենալով պարսկական և թուրքական ասիմիլյատորների լծից՝ Ռուսաստանի օգնությամբ՝ Հայաստանի ազատագրումը և այնտեղ նոր՝ բուրժուա-դեմոկրատական կարգերի հաստատումը:

Բուն ուսումնասիրության համար ֆոն հանդիսացող այս էջերն ավարտվում են Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի և Մ. Բաղրամյանի կենսագրության ու գործունեության մասին՝ հակիրճ տեղեկություններով:

Գ. Գրիգորյանի աշխատության համար ելակետային նշանակություն ունեն առհասարակ լուսավորիչների մասին տրված ամփոփումները: Բանն այն է, որ նա, շնայած առանձին գլխով չի բննարկում Հ. Էմինի և մյուսների՝ որպես հայ առաջին լուսավորիչների հարցը, սակայն ամբողջ դրքի միջով, կարմիր թելի նման, հետևողականորեն անց է կացնում այդ խնդրի հանգամանալից ուսումնասիրությունը: Հեղինակի հիմնական նպատակներից մեկն է բացահայտել նրանց հասարակական-քաղաքական հայացքների լուսավորչական բովանդակությունն ու էությունը: Եվ դա միանգամայն տեղին է, մանավանդ, որ նախորդ ուսումնասիրողներն այդ հարցը կամ չեն դրել, կամ շոշափել են ոչ անհրաժեշտ շափով ու խորությամբ: Ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ այդ խնդրի առաջին հանգամանալից քննությունը կատարված է գրախոսվող մենագրության մեջ: Գ. Գրիգորյանը մեկ առ մեկ կանգ է առել վերոհիշյալ գործիչների լուսավորչական հայացքների առանձին կողմերի վրա և վերլուծել դրանք: Դժվար է գտնել նրանց հայացքների փոքր ի շատե՛ս առաջավոր էական կետ, որը վրիպած լինե՛ր հեղինակի տեսադաշտից: Ըստ որում, նրա վերլուծությունն ուղադրվել է նաև մեթոդոլոգիական առումով և մեծապես օգտակար է առհասարակ հայ լուսավորիչների հայացքների ուսումնասիրության համար:

Ինչպես հայտնի է, լուսավորիչները, հակադրվելով ֆեոդալական միապետական, ճորտատիրական կարգերին, առաջ էին քաշում մարդկանց հավասարության, ազատության հարցը և նման ուրիշ գաղափարներ: Հեղինակը հարուստ փաստերով համոզում է, որ այդ գաղափարները պաշտպանվել և պրոպագանդվել են նաև հայ առաջին լուսավորիչների կողմից:

Չ. Հ. Գրիգորյան, Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից (18-րդ դ. երկրորդ կես), Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1957, 208 էջ:

Գրքում հետազոտված են Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի հայացքները՝ գիտություն, լուսավորություն, քաղաքակրթություն, առհասարակ մարդկանց գիտակցության հարցի մասին՝ հասարակության զարգացման ընթացքում նրանց ունեցած դերի ասպեկտով: Այստեղ ևս նրանք կանգնած են եղել ժամանակի համար առաջավոր դիրքերում: Պատշաճ ուշադրություն է նվիրված նաև հայ եկեղեցու և հայ եկեղեցական գործիչների դեմ հայ առաջին լուսավորիչների ունեցած քննադատական վերաբերմունքին:

Գ. Գրիգորյանը միաժամանակ ցույց է տալիս, որ Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի և Մ. Բաղրամյանի լուսավորչական գաղափարները ուղղված էին ոչ միայն կղերա-ֆեոդալական մտայնության և միապետական կարգերի դեմ, այլև համառորեն հետապնդում էին ազատագրական պայքարի նպատակը:

Ելակետ ունենալով մարքսիզմ-լենինիզմի ուղենիշ դրույթները, ծանոթ լինելով եվրոպական և ռուսական լուսավորիչների հայացքներին, տիրապետելով իր քննության առարկայի հետ կապված անհրաժեշտ տվյալներին, հեղինակը ըմբռնել է այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են եղել հայ առաջին լուսավորիչներին՝ նա իրավամբ ընդգծել է առանձնապես այն հանգամանքը, որ նրանց մոտ լուսավորչական գաղափարախոսությունն ու ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը զուգորդվելով, լրացնում ու պայմանավորում էին իրար: Երկրում ստեղծվելիք նոր հասարակական-քաղաքական կարգերի վերաբերյալ հայ առաջին լուսավորիչների ունեցած հայացքներն ուսումնասիրելիս՝ հեղինակը հատուկ ուշադրություն է նվիրել «Որոգայթ փառաց» զբոյսի երկրորդ մասին, որը հանդիսացել է նրանց կոնստիտուցիոն ծրագիրը:

Գիրքն առանձին թարմություն է ստացել Շ. Շահամիրյանի և նրա համախոհների բարոյագիտական հայացքների ուսումնասիրությամբ, որին նվիրված է առանձին գլուխ: Այստեղ քննարկված են այդ գործիչների հայացքները՝ պետության և անհատի շահերի, հայրենասիրության, պատերազմների, կնոջ վիճակի, ժողովուրդների բարեկամության և այլ խնդիրների վերաբերյալ:

Այս և ուրիշ հարցեր քննելիս հեղինակը դիպուկ համեմատություններով ցույց է տալիս նաև համապատասխան խնդիրների մասին եվրոպական լուսավորիչների ունեցած կարծիքները, որով և հայ առաջին լուսավորիչների պատկերն ավելի հստակ և կոնկրետ է դառնում:

Անդրադառնալով հայ առաջին լուսավորիչների քաղաքական ծրագրերի իրականացման ուղիների հարցին, հեղինակը կարողացել է եղած հարուստ նյութերի և ուսումնասիրությունների հիման վրա կատարել ճիշտ ամփոփումներ՝ ընդգծելով Հ. Էմինի, Մ. Բաղրամյանի և Շ. Շահամիրյանի քաղաքական-ազատագրական գործունեության առանցք կազմող խնդիրները, «Հայ անդրանիկ լուսավորիչները, — գրում է նա, — հենվելով XVIII դ. երկրորդ կեսին Անդրկովկասում տեղի ունեցող պատմա-քաղաքական իրադրության վրա, Հայաստանի թուրք-պարսկական լծից ազատագրման հնարավորությունը տեսնում էին՝

1. Հայ ժողովրդի մեջ լուսավորչական գաղափարներ տարածելու, նրան ազգային ինքնագիտակցության բերելու և ազատագրական պայքարի դուրս հանելու մեջ, Վարաբաղը հայ ազատագրական պայքարի կենտրոն դարձնելով:

2. Հայկական և վրացական ուժերի միավորման մեջ:

3. Ռուսաստանի՝ հյուսիսի մեծ պետության, որպես հայ ժողովրդի ավազանից բարերարի» հովանավորության և ուղղակի օգնության մեջ, առանց որի հայ-վրացական դաշինքը չէր կարող այնքան հզոր լինել, որպեսզի հնարավոր լիներ Հայաստանն ու Վրաստանը, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասը թուրք-պարսկական զավթիչներից ամբողջովին մաքրել և կասեցնել նրանց ձգտումը Անդրկովկասը նորից նվաճելու ուղղությամբ (էջ 161—162):

Այս ծրագրերը քննարկելու ժամանակ Գ. Գրիգորյանը նորից վեր է հանում այն նորն ու առաջադեմը, որ բնորոշ է եղել այդ ծրագրերի հեղինակներին որպես լուսավորիչների: Օրինակ, ընդգծելով նրանց ռուսական օրինատացիան, նա միաժամանակ չի մոռանում գնահատել նաև նրանց ժխտական վերաբերմունքը՝ ճորտատիրական կարգերի նկատմամբ:

Գ. Գրիգորյանի մենագրության մեջ փաստերի մեկնաբանությունը կատարված է բավարար օբյեկտիվությամբ: Նա երբևէ միակողմանիորեն չի տարվում նրանց զերազնահատմամբ կամ քննադատությամբ: Զգացվում է այն ջանքն ու կարողությունը, որն անհրաժեշտ էր գիտական և բարեխիղճ հավասարակշռության համար: Գնահատելով հայ առաջին լուսավորիչների առաջադեմ հայացքները, նա, որպես կանոն, նկատել է տալիս նաև նրանց մոտ առկա սահմանափակվածություն, իդեալիստական մտածելակերպի, ինչպես նաև հնի, կղերա-ֆեոդալական հասկացողությունների զանազան դրսևորումները: Օրինակ, շատ բարձր գնահատելով «Որոգայթ

փառացած»-ի արժանիքները, հեղինակը չի մոռանում ցույց տալ, որ այնտեղ առկա են նաև «կրոնական և ազգային սահմանափակվածությունը», «որոշ նացիոնալիստական տենդենցներ» և այլն (էջ 104)։ Գիտության ու լուսավորության հարցի վերաբերյալ հայ լուսավորիչների ունեցած առաջադեմ հայացքներում նա իրավացիորեն նկատում է նաև այդ գործոնների դերի գերազանահատություն, իդեալականացում (էջ 76)։ Նույնը կարելի է ասել նաև ֆեոդալական կարգերը՝ բուրժուա-դեմոկրատական կարգերով փոխելու խնդրի վերաբերյալ։ Նրանք չէին ըմբռնում, որ անցումը մի հասարակական-պետական կարգից՝ մյուսին չի՝ կարող իրականանալ սոսկ բարի ցանկությամբ, գիտակցությամբ, լուսավորությամբ, մի բան, որի վրա իզուր տեղը այնքան մեծ ջանքեր թափեց հատկապես Շ. Շահամիրյանը։ Վրաստանում ճորտատիրությունը վերացնելու նպատակով նա պատրաստ էր զոհաբերել իր հարստության զգալի մասը, եթե վրաց թագավորը համաձայնվեր։

Հարցի այս կողմին անդրադառնալիս էլ հեղինակը նորից չի կորցնում փաստերի գնահատման հետևողական ուղին. նա կարողանում է տալ նաև հայ առաջին լուսավորիչների մոտ առկա այս պատկերացումների գիտական բացատրությունը։

Առհասարակ պետք է նկատել, որ հեղինակը նպատակ է ունեցել խորանալ Հ. Էմինի, Մ. Բաղրամյանի և Շ. Շահամիրյանի այն հայացքների մեջ, որոնք նրանց կապում էին ոչ թե հնի հետ, այլ՝ նորի, առաջավորի։

Իր ուսումնասիրության հաջող ավարտն ապահովելու նպատակով Գ. Գրիգորյանն օգտագործել է բոլոր տպագիր ու ձեռագիր անհրաժեշտ սկզբնաղբյուրները, համապատասխան ուսումնասիրությունները, ինչպես նաև տեսական ու օժանդակ բավականաչափ գրականություն։ Այդ իսկ պատճառով էլ նրա գիրքը հագեցված է փաստահարուստ մեկնաբանություններով ու համոզիչ եզրակացություններով։ Գովելի է այն համեստ ու մեղմաբան աշխատասիրությունը, որով նա կարողացել է բազմաթիվ աղբյուրներից բերված փաստերով և նրանց առողջ մեկնություններով կառուցել իր գործը՝ խուսափելով այդ ճանապարհին ընկած անընդունելի հայացքներից ու կարծիքներից։ Չնայած նրան այստեղ չի գրավել վերջիններիս հատուկ բննադատությամբ զբաղվելը, սակայն ընթերցողը նրա աշխատության մեջ տեսնում է նաև նրանց անուղղակի և խորը բննադատությունը։ Նա Լրճեմն էլ շեղվելով բուն շարադրանքից, անդրադարձել է այդպիսի որոշ հարցերի և տվել ընդունելի բացատրություններ։ Հիշենք որպես օրինակ, ֆրանսիական ռևոլյուցիայի նկատմամբ Գ. Շահամիրյանի ունեցած բացասական դիրքի այն մեկնաբանությունը, որ տրված էր Ս. Տեր-Ավետիսյանի կողմից։ Գ. Գրիգորյանը համոզում է, որ այդ փաստը բոլորովին էլ չի ստվերում Շ. Շահամիրյանի ռեսպուրիկական հայացքները։

Մեր կարծիքով Գ. Գրիգորյանի մեկնությունն ունի նաև որոշ թերություններ և վերանայման կարող խնդիրներ։ Անկախ նրանից, որ հեղինակը գրքին կցել է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ, նրանց մասին պատշաճ նշումներ է կատարել գրքի համապատասխան էջերում, դարձյալ կարիք կար, որ հիմնական աղբյուրների մասին գրքի առաջին մասում խոսվեր առանձին։ Նույնը կարելի է ասել նաև հարցի պատմության վերաբերյալ. նման ուսումնասիրություն կատարողը պետք է ամփոփ կերպով ցույց տար իրենից առաջ, նախորդ մասնագետների կատարած աշխատանքը, գնահատեր այն և այդ ֆոնի վրա նշեր իր նպատակը։ Այնուհետև նկատելի է, որ տեղ-տեղ հեղինակը շփոթեց ավելի է վստահել իրենից առաջ կատարված բանասիրական հետախուզումներին։ Ինչպես հայտնի է, սկզբնական շրջանում «ՅՈՒՐՈՒՐԱԿ»-ը ծանոթ էր որպես Շ. Շահամիրյանի որդու՝ Հակոբ Շահամիրյանի գործ։ Հետագայում սակայն մասնագետները «ապացուցված» համարեցին, որ այդ գրքի հեղինակը՝ Մ. Բաղրամյանն է։ Այս կարծիքը այժմ ընդհանուր ճանաչում ունի, որին և հետևել է Գ. Գրիգորյանը։ Բայց բանի որ իր բնության առարկա Յ հեղինակներից մեկի հետ կապված էր նման պատմություն, լավ կլիներ, որ նա մտներ նաև այդ հարցի բանասիրության մեջ, մանավանդ, որ ըստ երևույթի «ՅՈՒՐՈՒՐԱԿ»-ի հեղինակը ոչ թե Մ. Բաղրամյանն է, այլ Հակոբ Շահամիրյանը։ Քանի որ տեղի սղությունը թույլ չի տալիս այդ մասին խոսել հանգամանորեն, կրավարարվենք լուր հետևալ փաստի վրա՝ ուշագրություն գրավելով։ «ՅՈՒՐՈՒՐԱԿ»-ն իրենից ներկայացնում է 7 գլխից բաղկացած մի ամբողջական գործ, որի 3-րդ գլուխը շարադրված է ակրոստիքոսով, իսկ այդ ակրոստիքոսն իրենից ներկայացնում է հեղինակի՝ այն է Հակոբ Շահամիրյանի անվան և ազգանվան տառերի մեկնումը՝ շարահյուսումը։ Մի բան, որը մինչև օրս վրիպել է մասնագետների հայացքից։ Եթե դրան ավելացնենք նաև այդ գրքի հիշատակարանի այն հատուկ զգուշացումը, թե նրա հեղինակն է Հ. Շահամիրյանը, խնդիրն ավելի ևս անվիճելի կդառնա։ Մեզ հայտնի են նույնն ապացուցող նաև ուրիշ փաստեր, որոնց մասին խոսելու ենք առանձին։

Պարզ է, որ հետագայում՝ «Տորգորակ»-ի կապակցությամբ պետք է հիշել Հակոբ Շահամիրյանին, շմոռանալով, սակայն, Բ. Բաղրամյանին գիտել որպես Հ. էմինի, Շ. Շահամիրյանի և Հ. Շահամիրյանի քաղաքական ու գաղափարական զինակցի:

Հեղինակը միանգամայն ճիշտ կերպով գրքում չի մոռացել նաև դասակարգային պայքարի հետ առնչվող փաստերի մեկնաբանությունը: Այստեղ որպես բուրժուա-դեմոկրատական կարգերի գաղափարական ու դասակարգային հակառակորդների նա ներկայացրել է հատկապես Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսներին: Այդ առնչությամբ նրանք միաժամանակ դիտված են որպես նաև ազատագրական պայքարի հակառակորդներ: Մեր կարծիքով խնդրի այս երկրորդ կողմը կարոտ է ավելի հանգամանալից քննության, մանավանդ, որ մինչև օրս ուրիշներն էլ դրան չեն անդրադարձել: Ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ դեռևս լուծված չէ այն հարցը, թե Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսները դեմ գնալով ապստամբական ազատագրական ծրագրերին՝ սոսկ էջմիածնի ֆեոդալական շահերի՞ց էին ելնում, թե նրանք նկատի ունեին նաև ռուսական ու վրացական օգնության ոչ պատշաճ իրազդրման վտանգը, որը հայ ժողովրդի համար կարող էր ավարտվել ճակատագրական տխուր հետևանքներով:

Գոյություն ունի այժմ ընդհանուր ընդունելության արժանացած, քայք վերանայման կարոտ մի կարծիք ևս, որին Գ. Գրիգորյանը մոտեցել է անվերապահ կերպով: Խոսքը վերաբերում է ռուս-հայկական դաշնագրի երկու նախագծերին: Իշխող կարծիքի համաձայն, այդ դաշնագրերում եղած հակասություններն արդյունք են մի կողմից Հ. Արղուիսյանի և Հ. Լազարյանի (որոնք ֆեոդալական-կղերական հետադեմ հայացքներ կրողներն էին), իսկ մյուս կողմից Շ. Շահամիրյանի և նրա զինակիցների հակադիր գաղափարախոսության: Մեր կատարած հանգամանալից որոնումների համաձայն, սակայն, այդ հակասություններն այլ հիմք ունեն. նրանք արդյունք են մի կողմից հայ հասարակական գործիչների, իսկ մյուս կողմից ցարիզմի ներկայացուցիչների՝ ապագա Հայաստանում ստեղծվելիք կարգերի մասին ունեցած միանգամայն ներհակ պահանջներին: Պարզվում է, որ Հ. Արղուիսյանը և Հ. Լազարյանը իրենց նախագիծը կազմել են ոչ թե Շ. Շահամիրյանի նախագծին հակադրվելու նպատակով, այլ ցարական արքունիքի պարտագրած պահանջները հաշվի առնելով:

Գ. Գրիգորյանի մեկնադրությունն առավել շահած կլիներ, եթե նրա տարբեր գլուխներում նույն հարցերի կապակցությամբ տրված որոշ քաջատրույթությունները երբեմն այս կամ այն շափով չկրկնեին միմյանց:

Օգտվելով առիթից կցանկանայինք մասնագետների ուշադրությունը հրավիրել մի փոքրիկ, քայք կարևոր փաստի վրա: Հ. էմինի մասին մեր գրականության մեջ անցյալում թվում է, թե համարյա ոչինչ չի ասված: Սակայն, ըստ, երևույթին, որոնումները կարող են ի հայտ բերել որոշ փաստեր՝ որոնք վրիպել են մասնագետների հայացքից: Այս կապակցությամբ ուշագրավ է օրինակ, Խ. Արովյանի դասընկերներից մեկի՝ Պետրոս Մադաթյանի (Սեյնադ) մի քանաստեղծությունը, որի 8-րդ տունը նվիրված է Հ. էմինի գովքին.

Ուղղափառ մարդ էր ժողովին էմին,
Ի շահ իւր ազգի եկն յէջմիածին,
Հայք չետուն նորա աշխատանաց զին,
Նա միշտ մեր թշուառ կեանքն արտասուէր²:

Ո՛չ պակաս նշանակություն ունի նաև հեղինակի կողմից այդ տողերին տրված հետևյալ ծանոթագրությունը.

«Ժողևի (Յովսէփ) էմին է՛ր արժանայիշատակ, գերաստիճան և ազգասէր Հայկազն, որ ի շահ դժբաղտ հայրենեաց իւրոց բազում աշխատեաց, շահեցաւ ոչինչ: Նորա ժառանգներն այժմ գտանին ի Ռուսաստան և յայտնի չէ, թէ հայք ըստ ազգասիրութեան նախնոյն նոցա սիրե՞ն և պատուե՞ն զնոսա, թէ ոչ²»:

Ավարտենք:

Գ. Գրիգորյանը կատարել է շնորհակալ ուշխատանք. իր մեկնադրության մեջ շոշափած տեսական հարցերով, նրանց քննարկման համար ցուցաբերած խոստումնալից կարողությամբ նա արժանի է միմիայն դրվատանքի:

¹ Մեր այդ որոնումները արդյունքները հրատարակվում են «Բանբեր»-ի 4-րդ հատորում:

² Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 7055, թերթ 53-րդ:

Քանի որ հայ լուսավորիչների հասարակական-քաղաքական առաջավոր հայացքները հանդիսանում են սովետական ժողովուրդների սնցյալի հասարակական-քաղաքական մտքի պատմության բաղկացուցիչ մասը և Գ. Գրիգորյանի գրքում արծարծված հարցերը մեծ հետաքրքրություն կենրկայացնեն նաև ուսուսերեն ընթերցողների համար, ուստի ցանկալի կլինեն, որ այն հրատարակվեր նաև ուսուսերեն թարգմանությամբ:

ԱՍ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ